# Լոռու մարզ

LORU MARZ
Regional newspaper

ISSN 1829-2542

Մարզային լրագիր
Մարտի 4, 2020 թ., չորեքշաբթի
թիվ 17 (11419)


## Ռուստամ Սահակյանը՝ ՎՊՀ ռեկտոր

Վանաձորի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի՝ մարտի 1-ի նիստի օրակարգում ռեկտորի ընտրության հարցն էր: Նախապես հաստատված 5 թեկնածուներից մեկը՝ Արմեն Ծատուրյանը, ինքնաբացարկի դիմում էր ներկայացրել:

Նախ խորհուրդը քննարկեց հավակնորդների՝ «ՎՊՀ ռեկտորի ընտրության» կարգով նախատեսված պահանջներին համապատասխանությունը, այնուհետ թեկնածուներն այբբենական կարգով ներկայացրին ծրագրերը: Դրան հաջորդեց խորհրդի անդամների, այնուհետ՝ թեկնածուների եզրափակիչ ելույթները:

Ձևավորվեց 5 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում քվեները բաշխվեցին հետևյալ կերպ՝ Ռուբիկ Դալլաքյան՝ 1, Ստեփան Ստեփանյանց՝ 1, Ռուստամ Սահակյան՝ 15, Զարուհի Վարդանյան՝ 6, բոլորին դեմ՝ 1: Հաշվիչ հանձնաժողովի նախագահն ամփոփեց ռեկտորի ընտրության արդյունքները. 15 ձայնով բուհի ռեկտոր ընտրվեց տեխնիկական գիտությունների դոկտոր, պրֆեսոր Ռուստամ Սահակյանը: Որոշումը կդրվի ԿԳՄՍ լիազոր մարմնի հաստատմանը:

*Շնորհավորում և աշխատանքային հաջողություններ ենք մաղթում Ռուստամ Սահակյանին:*

*(Ռուստամ Սահակյանի կենսագրությունը կտպագրվի թերթի հաջորդ համարներից մեկում):*

## Անդրեյ Ղուկասյան. «Պետությունը կայուն ֆինանսական վիճակում է եւ հնարավորություն ունի տարեցտարի ավելացնելու առողջապահության ոլորտին հատկացվելիք միջոցները, ինչը եւ արվում է»

### Վանաձորի բժշկական կենտրոնի տնօրենը հանդես եկավ տարեկան հաշվետվությամբ



Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանի ու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության նախաձեռնությամբ շարունակվում են մարզային ենթակայության բուժհիմնարկների տնօրենների հաշվետվությունները:

Փետրվարի 28-ին անցած տարվա աշխատանքային հաշվետվությամբ հանդես եկավ Վանաձորի բժշկական կենտրոնի տնօրեն Վահագն Մկրտչյանը: Ներկա էին մարզի ղեկավարը, մարզպետարանի գլխավոր քարտուղար Արթուր Մխիթարյանը, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանը: Ներկայացնելով նախաձեռնության նպատակը՝ Արթուր Մխիթարյանը նշեց, որ այս գործելաոճն աշխատանքներն առավել թափանցիկ և հաշվետվողական դարձնելու միտում ունի: Ներկայացնելով նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքները և 2018 թ. հետ համեմատական ցուցանիշները՝ տնօրենը նշեց, որ 2019-ի հունվարի 1-ի հետ համեմատած՝ 2020 թ. հունվարի 1-ի տվյալներով բուժհաստատության պարտքը շուրջ 137 մլն 453 հազար դրամից հասցվել է 69 մլն 841 հազարի, այսինքն՝ մարվել է 67 մլն 611 հազար 600 դրամ պարտք: Նույն ժամանակահատվածում վճարովի ծառայությունների մուտքերն աճել են 406 մլն 947 հազար դրամով՝ կազմելով 712 մլն 994 հազար դրամ: Աշխատակիցների թիվը հաշվետու ժամանակահատվածում աճել է 37-ով: Ընդունվել է 21 տոկոսով ավելի հիվանդ, պետպատվերի կատարողականն աճել է 65 տոկոսով կամ ավելի քան 527 մլն դրամով: Ըստ տնօրենի՝ ընկերության բյուջեն 2019-ի տարեսկզբին կազմել է 1 մլրդ 88 մլն 108,2 հազար դրամ, իսկ տարեվերջին՝ 1 մլրդ 524 մլն 300,8 հազար դրամ: Տարվա ընթացքում բազային ծավալը վերանայվել է 6 անգամ: Աշխատավարձերը բարձրացրել են 10-15 տոկոսով, և սա շարունակական բնույթ է կրելու: Այս առումով, ըստ տնօրենի, կիրառվում է նաև խրախուսման մեխանիզմը:

Նախորդ տարվա ընթացքում ներդրվել են հետևյալ նոր ծառայությունները՝ ինվազիվ սրտաբանություն, կանանց կոնսուլտացիա, վիրահատական բուժում ուռուցքաբանական ծառայությունում, ռեհաբիլիտացիոն հետազոտություններ: Սեփական միջոցներով ձեռք են բերվել մի շարք անհրաժեշտ սարքավորումներ, գույք, եղել են նաև նվիրատվություններ:

Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ մարզի ղեկավարը փաստեց, որ արդյունքներն աննախադեպ են: *«Ներկայացված արդյունքները, բնականաբար, մի շարք պատճառներ ու հիմնավորումներ ունեն՝ ստվերային դրամաշրջանառության դեմ պայքարը, մարդկանց վստահության բարձրացումը, նոր շենքային պայմանները, նոր ծառայությունների ներդրումն ու բարձրորակ մասնագետների ներգրավումը: Այսուհանդերձ, ամենակարևոր դերակատարությունն այս հարցում այն է, որ պետությունը կայուն ֆինանսական վիճակում է և հնարավորություն ունի տարեցտարի ավելացնելու առողջապահության ոլորտին հատկացվելիք միջոցները, ինչը և արվում է*,- ասաց մարզպետը՝ հատկապես ընդգծելով, որ պետպատվերով ծառայությունները վճարվում են ողջ ծավալով, ինչը նախկինում հազվադեպ երևույթ է եղել:- *Ոլորտը և մասնավորապես Վանաձորի բժշկական կենտրոնի գործունեությունն իմ ամենօրյա ուշադրության կենտրոնում է: Այնուամենայնիվ, ես ավելին եմ ակնկալում: Մեր նպատակը ոչ թե ստվերային դրամաշրջանառությունը նվազեցնելն է, այլ իսպառ բացառելը: Բուժաշխատողի արժանապատվությունը պետք է միշտ բարձր լինի, պետք է վեր կանգնել նման ճղճիմ երևույթներից: Նրանք, ովքեր պատրաստ չեն այս մոտեցմամբ աշխատել, մեզ հետ չեն կարող համաքայլ լինել: Մեր նպատակն է նաև, որ Վանաձորի բժշկական կենտրոնը տարածաշրջանում դառնա ամենապահանջված բուժհաստատությունը՝ եզակի բուժծառայություններով և մասնագետներով, դրա համար նաև ցանկացած գեներացված միջոց պետք է ուղղորդվի նոր սարքավորումների, տեխնիկայի ձեռքբերմանը»*,- ասաց Ա. Ղուկասյանը:

Նա կարևորեց նաև հիվանդների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի դրսևորումը՝ անկախ ստեղծված իրավիճակներից: Մարզպետը հորդորեց շարունակել հետևողական աշխատանքները նոր մասնագետ կադրերի ներգրավման ուղղությամբ: Նա պատասխանեց նաև բուժաշխատողների հարցերին:

*[illegible]*

**ԿՐԹԱԿԱՆ**

## Պարգեւատրվեցին հաղթող թիմերը

### Մարզի ղեկավարը ծանոթացավ նաեւ Վանաձորի թիվ 6 դպրոցի առաջնահերթ խնդիրներին

Վանաձորի թիվ 6 հիմնական դպրոցի նախաձեռնությամբ և Լոռու մարզպետարանի՝ ի դեմս մարզպետ Անդրեյ Ղուկասյանի, աջակցությամբ անցկացվեց Լոռու մարզի հիմնական դպրոցների բասկետբոլի եռօրյա առաջնություն՝ նվիրված Հայոց բանակի օրվան և զոհված զինծառայողների ու մասնավորապես թիվ 6 դպրոցի նախկին սան հերոսների՝ Սպարտակ Քալաշյանի, Գարիկ Պողոսյանի և Մովսես Խուդինյանի հիշատակին: Առաջնությանը մասնակցում էին 12 թիմեր Վանաձորի, Ալավերդու և Տաշիրի դպրոցներից:

Փետրվարի 26-ին առաջնության փակման արարողությանը ներկա էր և մասնակից ու հաղթող թիմերին ողջունեց Ա. Ղուկասյանը: Նրան ուղեկցում էին նաև մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռաֆայել Հարությունյանը, մշակույթի և սպորտի բաժնի պետ Արամ Ռևազյանը:

Մինչ մրցանակաբաշխությունը մարզի ղեկավարը հանդիպեց զոհված զինծառայողների ծնողների և հարազատների հետ: Իր խոնարհումը հայտնելով հերոսների հիշատակին՝ մարզպետը նշեց, որ պատրաստակամ է ցանկացած հնարավոր և անհնարին հարցում իր ուժերի ներածին չափով աջակցելու նրանց:

*«Դուք հայրենիքին տվել եք ամենաթանկը: Ես գլուխ եմ խոնարհում ձեր առջև և վստահեցնում, որ միշտ ձեր կողքին եմ լինելու: Մենք մշտապես նմանատիպ միջոցառումներ ենք նախաձեռնելու, որպեսզի ձեր զավակների օրինակը ոգեշնչի մեր սերունդներին՝ ավելի հայրենասեր ու քաջ լինելու, անսահման սիրով սիրելու հայրենիքը»*,- ասաց Ա. Ղուկասյանը:

Հաղթող թիմերին մրցանակներ հանձնելու պատիվն ընձեռվեց մարզի ղեկավարին, Ռաֆայել Հարությունյանին և Սպարտակ Քալաշյանի հորը՝ Սարգիս Քալաշյանին:

Առաջին պատվավոր մրցանակը շնորհվեց Վանաձորի թիվ 6, երկրորդը՝ Տաշիրի թիվ 2 և երրորդը՝ Վանաձորի թիվ 3 հիմնական դպրոցներին:

Վերջիններիս շնորհավորելով հաղթանակի և մյուս թիմերին՝ ակտիվ մասնակցության համար՝ մարզպետը նշեց, որ նմանատիպ մարզական միջոցառումներն այսպիսի ձևաչափով այսուհետ պարբերական բնույթ են կրելու:

Դպրոցի շնորհալի աշակերտները հյուրերին և մասնակից թիմերին ողջունեցին նաև գեղարվեստական կատարումներով:

Միջոցառման ավարտին Ա. Ղուկասյանը և Ռ. Հարությունյանը շրջեցին կրթօջախում՝ ծանոթանալով պայմաններին և առկա խնդիրներին: Ինչպես ներկայացրեց տնօրեն Նազելի Ասատրյանը, և ականատես եղավ մարզի ղեկավարը, դպրոցն ունի կոսմետիկ նորոգման, հատակի, պատուհանների և դռների մի մասի նորացման ու, որ ամենակարևորն է, գույքի նորացման խնդիր:



Մարզպետը նաև զրուցեց աշակերտների հետ՝ նրանց հորդորելով լավ սովորել: Շրջայցից հետո Ա. Ղուկասյանը հանդիպեց դպրոցի ուսուցչական կազմի հետ՝ հետաքրքրվելով նրանց հուզող խնդիրներով:

Ուսուցիչները ևս առաջին հերթին կարևորեցին դպրոցի վերանորոգման և գույքով համալրման անհրաժեշտությունը:

*«ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ներկա փուլում գույքագրում ենք մարզային ենթակայության բոլոր դպրոցների խնդիրները, այնուհետև կկատարվեն նախագծանախահաշվային աշխատանքներ, որոնք կներկայացվեն ՀՀ Կառավարությանը: Վստահեցնում եմ ձեզ, որ կարճ ժամանակ անց այլևս նման խնդիրներից չենք խոսելու, այլ բացառապես քննարկելու ենք կրթության որակի բարձրացմանն ուղղված քայլերը: Մենք վճռական ենք այն հարցում, որ մեր երկրում, մեր մարզում վատ պայմաններում գործող կրթօջախներ չեն լինելու»*,- ասաց մագպետը: Նա կրկին ու կրկին հորդորեց լուրջ ուշադրություն դարձնել կրթության որակի վրա:

*«Այս տարի Լոռու մարզի կրթության ոլորտին հատկացվել է 7 մլն դրամով ավելի գումար, և այս, ինչպես նաև ուսուցիչների աշխատավարձերի բարձրացման գործընթացը շարունակական բնույթ է կրելու»*,- ասաց Ա. Ղուկասյանը: Նա նաև նշեց, որ իր նախաձեռնությամբ դպրոցների միջոցների վերաբաշխման արդյունքում ևս նախորդ տարի շուրջ 80 մլն դրամի աշխատանքներ են իրականացվել այն կրթօջախներում, որտեղ դրա կարիքն առավելապես զգացվել է: Մարզպետի վստահեցմամբ՝ մինչ պետական աջակցությամբ բոլոր դպրոցների խնդիրների համալիր լուծումը այս գործընթացը ևս կշարունակվի:

## ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պատասխանատուները ներկայացրին բուհի գործունեությունը



ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ներկայացուցիչները համալսարանի պետ, գնդապետ Խաչատուր Խաչատրյանի գլխավորությամբ մասնագիտական կողմնորոշման հանդիպում անցկացրին Վանաձորի մի շարք դպրոցների ավագ դասարաններում սովորող աշակերտների, զինղեկների հետ:

Մինչ միջոցառման մեկնարկը մարզի ղեկավարի անունից կազմակերպիչներին ողջունեց Լոռու մարզպետի տեղակալ Գայանե Մարկոսյանը՝ նշելով, որ նմանատիպ հանդիպումները կարևոր են, քանի որ օգնում են դպրոցականներին կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում:

*«Մենք չափազանց կարևորում ենք և ջանքեր չենք խնայում դպրոցականների շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակությունն ամենաբարձր մակարդակի վրա պահելու համար»*,- ասաց Գ. Մարկոսյանը՝ մարզպետի անունից պատրաստակամություն հայտնելով աջակցություն ցուցաբերելու դպրոցներին՝ բարձր դասարանցիների այցը ռազմական համալսարան կազմակերպելու, ...երի պայմաններին ծանոթանալու հարցում:

Հանդիպման ընթացքում Խ. Խաչատրյանը ներկայացրեց ռազմական համալսարանը, բաժինները, ընդունելության կարգը, անդրադարձ կատարեց դասապրոցեսի կազմակերպմանը, ֆիզիկական պատրաստության պարապմունքներին: Համալսարանի պետը պատասխանեց նաև աշակերտներին և զինղեկներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերում էին ընդունելության կարգին, պահանջներին, ուսումից հետո շրջանավարտների հետագա ծառայությանը:

Ցուցադրվեց նաև ռազմական համալսարանի հիմնադրման և գործունեության մասին պատմող կարճամետրաժ ֆիլմ:

Հանդիպման ավարտին Խ. Խաչատրյանը մարզի ղեկավարին փոխանցեց համալսարանի շնորհակալագիրը՝ երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում զգալի ներդրման համար:

***Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին***

# Հայոց երկու մեծերի հոբելյան



2019 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի տոնացույցում հայոց մշակույթի երախտավոր երկու հանճարների 150-ամյա հոբելյան էր փաստագրված՝ արժանվույնս տոնելու համար:

Հավատարիմ իր առաքելությանը՝ այս հոբելյաններին պատշաճ անդրադարձավ նաև «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնի նույնանուն հայագիտական հանդեսը:

Հոբելյանական տարվա ընթացքում «Մաշտոց» հանդեսի առանձին համարներ նվիրվեցին ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանին և հայ երգարվեստի մեծագույն երախտավոր Կոմիտաս վարդապետին:

Տարեվերջին «Արվեստագետ» կրթամշակութային հասարակական կազմակերպության խորհրդի որոշմամբ «Մաշտոց» հանդեսի խմբագրակազմն արժանացավ «Հովհաննես Թումանյան - 150» և «Կոմիտաս -150» հուշամեդալների:

«Արվեստագետ» կազմակերպության որոշումը «Մուշ» համալիրում ի կատար ածեցին կազմակերպության հիմնադիր Իվան Անտոնյանը և խորհրդի նախագահ Էդվարդ Խլղաթյանը: Հոբելյանական հուշամեդալները պատշաճ արարողակարգով հանձնվեցին «Մաշտոց» հանդեսի խմբագրապետ Գագիկ Աթաբեկյանին, ու ևս մեկ անգամ գնահատվեց և կարևորվեց «Մաշտոց» կրթամշակութային հանդեսի խմբագրակազմի հայրենաշահ առաքելությունը:

*ԷԴՎԱՐԴ ԽԼՂԱԹՅԱՆ*
*«Մշո զարմ» գիտակրթական հկ-ի նախագահ*

# Տաթևիկ Սամվելի Խալաթյան

Կյանքից վաղաժամ հեռացել է Տաթևիկ Խալաթյանը՝ խոր վիշտ պատճառելով ոչ միայն իր հարազատներին, այլև բոլորիս:

Ծնվել է 1977 թվականին Վանաձորում:

Միջնակարգ կրթություն ստանալուց հետո՝ 1994 թվականին, ընդունվել և 1999 թվականին ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի անգլոհոգեբանական բաժինը:

Բարձրագույն կրթություն ստանալուց հետո աշխատել է «Վերածնունդ» քաղաքային թերթի խմբագրությունում՝ որպես գրական աշխատող, այնուհետև՝ Վանաձորի թիվ 2 մանկապարտեզում՝ դաստիարակ:

Ընտանիք կազմելուց հետո մշտական բնակության է մեկնել Ռուսաստանի Դաշնություն, բնակվում էր Ստավրոպոլ քաղաքում:

Ունի մեկ դուստր և որդի:

Նրան հիշում ենք թերթի խմբագրությունում աշխատելու տարիներից:



Կենսախինդ և կենսասեր էր, միաժամանակ համեստ ու պատվախնդիր: Դեռ շատ նպատակներ ու իղձեր ուներ, որոնք, ցավոք, մնացին անկատար:

Երկնային արքայություն քեզ, սիրելի Տաթևիկ:

*«ԼՈՌՈՒ ՄԱՐԶ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

# Մարզի ղեկավարը մրցանակակիրներին պարգեւատրեց մեդալներով եւ պատվոգրերով



Փետրվարի 2-ին Վանաձորի օլիմպիական հերթափոխի և մենապայքարային մարզաձևերի մարզադպրոցում Լոռու մարզպետարանի և Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի հետ համատեղ անցկացվեց Լոռու մարզի սամբոյի պատանիների ընտրական առաջնությունը, որի նպատակը մարզում սամբո մարզաձևի մասսայականացումը և զարգացումը, մարզիկների սպորտային վարպետության կատարելագործումը և ուժեղագույն մարզիկների հայտնաբերումն էր մարզային հավաքական թիմ ձևավորելու հեռանկարով:

Առաջնությանը մասնակցում էին Լոռու մարզի մարզական կազմակերպությունների, մարզադպրոցների և մարզական ակումբների 2002-2004 թթ. ծնված պատանիներ ու աղջիկներ:

Մրցաշարի մասնակիցներին իրենց ներկայությամբ ոգևորում էին մարզպետ Անդրեյ Ղուկասյանը, մարզպետարանի պաշտոնյաներ:

Բոլոր մրցանակակիրներին մարզի ղեկավարը պարգևատրեց մեդալներով ու պատվոգրերով:

Առաջին, երկրորդ և երրորդ տեղը գրաված մարզիկներն իրավունք ստացան մասնակցելու հանրապետական մրցաշարին:

*Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին*

# Խանութից դրամապանակ է գողացել ու բռնվել. Վանաձորի ոստիկանների բացահայտումը

Հունվարի 31-ին՝ ժամը 15.30-ի սահմաններում, մի կին ոստիկանության Տարոնի բաժնում հաղորդում է տվել, որ մեկ ժամ առաջ, օգտվելով իր անուշադրությունից, Վանաձորի Մյասնիկյան փողոցում գործող խանութի վաճառասեղանից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է փող:

Հաղորդումը ստանալուն պես քրեական հետախույզները անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկեցին: Արագ և օպերատիվ աշխատանքի շնորհիվ դեպքից ժամեր անց նշված գողությունը կատարելու կասկածանքով Վանաձորի Չուխաջյան փողոցից ոստիկանության Տարոնի բաժին բերման ենթարկվեց նույն փողոցի 29-ամյա մի բնակիչ: Նա տվել է խոստովանական բացատրություն: Բերման ենթարկվածի անձնական խուզարկությամբ դրամապանակը հայտնաբերվել է:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

# Շնորհավորագիր

Հարգարժա՛ն Հայկ Միրյան,

Անմոռանալի հիշողություն է ինձ համար գեղարվեստական երեկոն՝ նվիրված Նոր Նորք վարչական շրջանում Ձեր իսկ ղեկավարությամբ կազմակերպված Գրադարանավարի և Ուսուցչի օրերին: Այդ պահից ի վեր Ձեր մարդկային կերպարն ինձ համար է՛լ ավելի դրվատելի դարձավ...

Շնորհավորում եմ Ձեզ ՀՀ փոխոստիկանապետի պատասխանատու պաշտոնն ստանձնելու առթիվ:

Մաղթում եմ Ձեզ արժանապատիվ ղեկավարում՝ ի նշան մեր Հայոց աշխարհի խաղաղության և անվտանգության:

*ԻՎԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ*
*«Արվեստագետ» կրթամշակութային հկ-ի նախագահ և «Արվեստագետ» կրթամշակութային հանդեսի գլխավոր խմբագիր*




## «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՃՈՃԿԱՆԻ ԳՈՌ ԽՈՒԴԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ (17 ԴԱՍԱԺԱՄ), ՏՂԱՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ (4 ԴԱՍԱԺԱՄ), ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ (21 ԴԱՍԱԺԱՄ) ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ (4 ԴԱՍԱԺԱՄ) ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթները տեղի կունենան մարտի 9-ին՝ ժամը 13-ին, Ճոճկանի միջնակարգ դպրոցում: Հեռ.՝ (077) 10-50-40:

*ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*



## «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԻՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ ՏՂԱՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ (2,5 ԴԱՍԱԺԱՄ), ԱՂՋԻԿՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ (1 ԴԱՍԱԺԱՄ), ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ (2 ԴԱՍԱԺԱՄ), ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ (9 ԴԱՍԱԺԱՄ) ԵՎ ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ (2 ԴԱՍԱԺԱՄ) ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան մարտի 9-ին՝ ժամը 12-ին, Քարինջի միջնակարգ դպրոցում: Հեռ.՝ (077) 73-42-32:

*ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*



## «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ (10 ԴԱՍԱԺԱՄ) ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մարտի 9-ին՝ ժամը 14-ին, Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցում: Հեռ.՝ (093) 92-20-52:

*ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*



## «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (7 ԴԱՍԱԺԱՄ) ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ (3 ԴԱՍԱԺԱՄ) ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ (ՌՈՒՍԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ Է)

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3.Անձնագրի պատճենը,
4.Ինքնակենսագրություն (Ձև 4),
5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6.Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան մարտի 9-ին՝ ժամը 12-ին, Լերմոնտովոյի միջնակարգ դպրոցում:

Հեռ.՝ (0322) 6-86-58, (091) 95-32-94:

*ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Կ. Ղարաքեշիշյանի անվան թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթներ՝ ֆիզիկայի (3 դասաժամ) և ռուսաց լեզվի (5 դասաժամ) դասախոսների, հյուսն-ատաղձագործ և փականագործ՝ տրանսպորտային միջոցների շահագործման որակավորումներով արտադրական ուսուցման վարպետների թափուր տեղերի համար:

Պայմանների և պահանջվող փաստաթղթերի մասին ծանոթանալ տեղում կամ զանգահարել (0322) 2-04-10 հեռախոսահամարով (հայտարարության հրապարակման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում):

Հասցեն՝ ք. Վանաձոր, Դեմիրճյան 23:

# «ԱՐԱՄԱԶԴ. ՍՄԱՐԹ». տեղեկատվական հանդիպում Լոռու մարզպետարանում

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «ԱՐԱՄԱԶԴ. ՍՄԱՐԹ» ծրագրի շրջանակներում հայտարարված միջոլորտային համագործակցության դրամաշնորհային ծրագրերի մրցույթի առաջին փուլի մասնակցության հետ կապված մանրամասները, գործընկերների հետ միջոլորտային գաղափարները, մրցույթին մասնակցելու նախապայմանները և այլ հարցեր քննարկելու նպատակով օրերս Լոռու մարզպետարանում տեղի ունեցավ հանդիպում՝ մարզի միավորված և սահմանամերձ գյուղական համայնքների զարգացմանն աջակցող միջոլորտային դրամաշնորհի հայտեր ներկայացնող կողմերի մասնակցությամբ: Մասնակցում էին նաև «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի հետ համագործակցած քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, փոքր և միջին ձեռնարկությունները:

Ներկաներին մարզի ղեկավարի և իր անունից ողջունեց մարզպետի տեղակալ Գայանե Մարկոսյանը՝ կարևորելով նման համագործակցությունը և պատրաստակամություն հայտնելով աջակցել ծրագիրը հաջող իրականացնելու համար:

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «ԱՐԱՄԱԶԴ. ՍՄԱՐԹ» ծրագրի ղեկավար Զառա Աղանյանը նշեց, որ հանդիպումը տեղեկատվական նպատակ ունի: Ըստ նրա՝ միջոլորտային համագործակցության դրամաշնորհի նպատակն է՝ նպաստել գյուղական միավորված, այդ թվում՝ սահմանամերձ համայնքներում առկա համայնքային զարգացմանն ուղղված առաջնահերթ հիմնախնդիրների լուծմանը՝ ՔՀԿ - ՏԻՄ - ՓՄՁ միջոլորտային համագործակցության խթանման միջոցով: Ըստ ծրագրի պահանջների՝ համայնքային զարգացմանն ուղղված միջոլորտային դրամաշնորհային ծրագրերը պետք է նպաստեն միավորված գյուղական և սահմանամերձ համայնքներում սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, սահմանամերձ գյուղական համայնքներում երիտասարդների արտահոսքի կանխարգելմանը, գյուղական համայնքներում մասնագիտական ուսուցման որակի բարձրացմանը, գյուղարտադրության խթանմանը և գյուղական զբոսաշրջության զարգացմանը, համայնքային ենթակառուցվածքների բարենորոգմանը, հզորացմանը, համայնքային ծառայությունների որակի բարելավմանը, գյուղական վայրերում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, համայնքային առաջնային կարևորության հիմնախնդիրների լուծմանը և ՏԻՄ գործունեության բարելավմանը: Ծրագրի ղեկավարը նաև ասաց, որ նպատակ ունեն տեղեկատվություն տրամադրել մրցույթի քայլերի վերաբերյալ, որպեսզի հայտատուներն ավելի պատկերավոր գաղափար ունենան հայտերի կազմման և դրանք մրցույթի ներկայացնելու մասին:

*«Մեր նպատակն է նաև հայտատուին տեղեկացնել համայնքներում նախատեսվող անտոկոս բիզնես փոխառության տրամադրման պայմանների և հնարավորությունների: Սա բաց քննարկում է, որի ընթացքում մենք կարող ենք նաև գրանցել համայնքների զարգացմանն ուղղված խելացի և հետաքրքիր գաղափարներ ու առաջարկներ, որոնք հետագայում կֆինանսավորվեն և կյանքի կկոչվեն»*,- ասաց նա:

Ներկայացված միջոլորտային դրամաշնորհային ծրագրերը Լոռու մարզում նախատեսված են իրականացնել Գյուլագարակ, Լոռի Բերդ, Մեծավան, Օձուն, Սարչապետ համայնքներում:

Ծրագրի արժեքը, ծրագրի ղեկավարի հավաստմամբ, կազմելու է 8-10 հազար եվրոյին համարժեք դրամ: Ներկայացված հայտերը կքննարկվեն կազմակերպության մասնագետ-փորձագետների կողմից: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է 2020 թվականի մարտի 2-ը:

Հանդիպման ավարտին մասնակից ՔՀԿ - ՏԻՄ - ՓՄՁ ներկայացուցիչները ստացան իրենց մտահոգող հարցերի պատասխանները:

***Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին***

## ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ

# «Զինագործություն» թեմայով միջոցառում Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանում



Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերված զենքերի նախնական տեսակներն ու գործիքները, որոնցով պատրաստել են զենքի այս կամ այն տեսակը, Հայկական բարձրավանդակում զինագործության բարձր մակարդակի վառ ապացույցն են: Զինագործությունը տարածված արհեստներից մեկն է եղել, որը, անջատվելով դարբնությունից, սկսել է իր ենթաճյուղերով հանդես գալ որպես առանձին արհեստ և ժամանակի ընթացքում անցել զարգացման փուլեր:

Դեռևս հնադարյան մարդն է իր գոյությունը պահպանելու, պաշտպանվելու, ապրուստի միջոց հայթայթելու համար ստեղծել է զենք՝ պատրաստված քարից, ոսկորից, փայտից, նաև մետաղից: Դարերի ընթացքում զենքի տեսակները զարգացել են՝ տարբեր դիրքի մարդկանց մոտ հասնելով անգամ մինչև ոսկով և արծաթով զարդարվելուն:

Օրերս Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանի հարկի տակ «Զինագործություն» թեմայով դասախոսություն-ցուցադրություն էր կազմակերպվել, որին ներկա էին Վանաձորի թիվ 2, 3, 13 դպրոցների սաներն ու ուսուցիչները, թեմայով հետաքրքրված քաղաքացիներ: Դասախոսության ժամանակ անդրադարձան Հայաստանում կիրառված զինատեսակներին, դրանց գործածման ձևերին, մարտեր վարելու արվեստին: Հյուրերի մասնակցությամբ հարցերի ու պատասխանների միջոցով ավելի ամրապնդվեց ներկայացված նյութը: Դասախոսությունն ամբողջացավ զինատեսակների ցուցադրությամբ:

*ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ*

# Լոռվա ձմեռ - 49-ը՝ Թեժ լեռան հովտում

Փետրվարի 22-ի առավոտը արևոտ էր ողջ Լոռիում: Պարզ, անմշուշ օրը տոնական տրամադրությամբ էր համակել լոռեցիների սրտերը, որը կրկնապատկվեց, բազմապատկվեց այդ նույն օրը անցկացվող մարզամշակութային «Լոռվա ձմեռ» ամենամյա ավանդական տոնակատարությամբ: Հազարավոր լոռեցիներ՝ մարզահագուստով, առանց մարզահագուստի, սահնակներով, դահուկներով լցվեցին, նվաճեցին ու դարձան օրվա, հովտի, ուրախ տրամադրության տերն ու տնօրենը: Բարձրախոսներից հեռուներ տարածվող ուրախ երաժշտությունը և հանդիսավար, ասմունքի վարպետ Ջիվան Սարգսյանի հնչեցրած խրոխտ բանաստեղծություններն ավելի էին աշխուժացնում եռուզեռը:

Բեմահարթակ բարձրացան Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը, Վանաձորի համայնքապետ Մամիկոն Ասլանյանը, Լոռու մարզային ու Վանաձորի քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ: Ա. Ղուկասյանի հրավերով տոնահանդեսին մասնակցում էր նաև Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը: Տրվեց «Լոռվա ձմեռ» 49-րդ մարզատոնահանդեսի մեկնարկը, որն այս անգամ նվիրվեց Հովհաննես Թումանյանի ծննդյան 151-ամյակին: Խորհրդանշական ջահը վառելու պատիվը տրվեց սամբո մարզաձևից սպորտի վաստակավոր վարպետ, միջազգային բազմաթիվ մրցաշարերի հաղթող, ութ տարի անընդմեջ մարզում լավագույն մարզիկ ճանաչված Տիգրան Կիրակոսյանին: Տոնը շնորհավորեցին, բարեմաղթանքի խոսքեր ասացին ղեկավար անձինք:

Սկսվեցին մարզական խաղերն ու մրցելույթները: Կազմակերպիչները հոգացել էին ավելի շատ մարզաձևերի ընդգրկման, դրանց տեղի ընտրության, արդար մրցակցության ապահովման հոգսերը: Մեկը մյուսի ետևից ավարտվեցին դահուկավազք, լեռնադահուկներով վազք, վետերանների դահուկավազք, պարանի ձգում, ձյան վրա վոլեյբոլ, մինի ֆուտբոլ, պարկերով փոխանցումավազք, կշռաքարերի բարձրացում, ձնեմարդի պատրաստում, ձնագնդիի նետում ճիշտ նշանակետին, բազկամարտի, բարձունքի հաղթահարում, սահնակով վայրէջք, բարձակռիվ, շախմատ, բռնցքամարտ, ազգային կոխ, սուսերամարտ մարզաձևերից մրցությունները, հաղթողներն արժանացան պարգևների՝ պատվոգրեր, դրամական պարգևներ, թանկարժեք նվերներ:

Նկատելի էր տոնահանդեսի բարձր կազմակերպվածությունը: Մասնակցել ցանկացողներին ավտոբուսները Վանաձորի Վարդանանց և Հայքի հրապարակներից բերեցին Թեժի հովիտ և ետ տարան քաղաք՝ անվճար: Մասնակցեցին երգի, պարի, գեղարվեստական բազմաթիվ համույթներ, հանրահայտ կատարողներ: Ամբողջ ընթացքում գործեցին հասարակական սննդի կետեր, խաղային զանազան միջոցներ՝ մեքենաներ, սարքեր, մեծ հետաքրքրությամբ դիտվեց լարախաղացի համարձակ ելույթը: Ոստիկանության ներկայացուցիչները լավագույնս ապահովեցին հասարակական կարգուկանոնն ու անվտանգությունը, ամբողջ ժամանակ տեղում էին շտապ օգնության բժիշկները: Այդ ամենն էլ ապահովեցին մի անգամ էլ անցնող ձմռան վերջին սառնաշունչ ջերմությունը լավ զգալուն, մի անմոռանալի օր ևս հիշողության «արխիվում» ունենալուն:

*ԳԱԳԻԿ ԱՆՏՈՆՅԱՆ*

# Համայնքներին առաջարկվում է ստեղծել կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ

Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանի հրավերով մարզպետարանում էին ՄԱԶԾ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի Փոքր դրամաշնորհային ծրագրի ազգային համակարգող Հովհաննես Ղազարյանը, ծրագրի այլ ներկայացուցիչներ, «Խազեր» էկոլոգիամշակութային հիմնադրամի ներկայացուցիչ Արամ Գաբրիելյանը, գործարարներ, Լոռու մարզի համայնքների ղեկավարներ:

Հանդիպմանը մասնակցում էին փոխմարզպետ Գայանե Մարկոսյանը, մարզպետարանի այլ պաշտոնյաներ:

Հանդիպման նպատակը նորարարական ֆինանսական նոր մեխանիզմի առաջարկումն էր Լոռու մարզի համայնքներին, որը կներդրվի որպես փորձարարական ծրագիր՝ օգնելով համայնքներին ունենալու շրջանառու միջոցներ առավել անկաշկանդ կերպով տարբեր ծրագրերի մասնակցելու համար:

*«Համայնքներին առաջարկվում է ստեղծել նորարարական ֆինանսական գործիք համայնքի մակարդակով՝ կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ: Վերջինս պատկանում է տվյալ համայնքի բոլոր բնակիչներին, և պայմանն այն է, որ ներդրվող միջոցները, որոնք կօգտագործվեն համայնքային էկոլոգիական խնդիրների լուծման համար, որոշ ժամանակ անց վերադարձվեն հիմնադրամին՝ շարունակական կարգով այժմ էլ արդեն այլ ծրագրեր իրականացնելու համար»*,- նշեցին հյուրերը:

Նախնական ներդրումը իրականացվելու է ՄԱԿ-ի կողմից, սակայն հետագայում արդյունավետ գործելու դեպքում հիմնադրամում ներդրումներ կարող են կատարել նաև անհատներ, համայնքը, տարբեր կազմակերպություններ:

Մարզի ղեկավարին առաջարկվեց նաև այն գաղափարը, որ ստեղծելով հիմնադրամները՝ դրանք՝ որպես ներդրումներ անող երրորդ ֆինանսական աղբյուր, կարող են ներգրավվել սուբվենցիոն ծրագրերի իրականացման ժամանակ, ինչը կթեթևացնի համայնքների բեռը և խոշորածավալ ծրագրեր իրականացնելու հնարավորություն կընձեռի:

Ողջունելով հյուրերին և շնորհակալություն հայտնելով հրավերն ընդունելու համար՝ մարզպետը, կարևորելով նախաձեռնությունը, նշեց, որ Լոռու մազպետարանը կանի ամեն հնարավորը, որպեսզի փորձարարական ծրագիրը հաջող ընթացք ստանա և ընդօրինակելի լինի:

*«Սուբվենցիոն ծրագրերը տարեցտարի ավելի մեծ ծավալներ են ընդգրկում, և այս հիմնադրամների ստեղծումը կնպաստի, որ համայնքները էկոլոգիական ուղղվածության բազմաթիվ մեծ ծրագրեր կարողանան իրականացնել, ինչը սուղ ֆինանսական միջոցների դեպքում հաճախ չեն կարողանում կյանքի կոչել: Ի դեպ, սուբվենցիոն ծրագրերի դեպքում, պետություն - համայնք համատեղ ներդրումներից զատ, երրորդ ֆինանսական աղբյուրի ներգրավման դեպքում պետությունը նաև արտոնություններ է սահմանում, ինչը ևս շահագրգռող քայլ է»*,- ասաց մարզպետը:

Հանդիպման ավարտին մեխանիզմներ մշակելու համաձայնություն ձեռք բերվեց՝ կարճ ժամկետներում նախաձեռնությունը կյանքի կոչելու համար:

***Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին***

## ՔՐԵԱԿԱՆ

# Մի շարք համատիրությունների ղեկավարներ կասկածվում են օտարերկրացիների կեղծ տեղեկանքներ տրամադրելու մեջ

Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժնի հետաքննչական բաժանմունքում նյութեր են նախապատրաստվում Լոռու մարզում կատարված պաշտոնական լիազորությունների չարաշահման փաստով:

ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Վանաձոր քաղաքի համատիրությունների մի քանի ղեկավարներ իրենց աշխատանքային պարտականությունների ընթացքում թույլ են տալիս չարաշահումներ, որոնք դրսևորվում են իրենց լիազորությունները չարաշահելու կամ անցնելու, ապօրինի, վարձատրության դիմաց իրավունք վերապահող փաստաթղթեր կեղծելու տեսքով: Օպերատիվ տեղեկություններով պարզվել է, որ Վանաձորում գործող համատիրություններից մեկի ղեկավարն իր լիազորություններն անցնելու միջոցով 2019-ի սեպտեմբեր ամսին Ումար Օմարովին, Մուսլիմ Գաբիբուլաևին, Էլմիրա Գաբիբուլաևին, Ռամոնով Խետագ Արսենովիչին, Խադոնով Մարատ Ռուսլանովիչին տրամադրել է Աճառյան փողոցի 11 շենքի թիվ 26, Ներսիսյան թաղամասի 12 շենքի թիվ 50 և Աճառյան փողոցի 15 շենքի թիվ 20 բնակարաններում փաստացի բնակվելու վերաբերյալ իրավունք վերապահող կեղծ տեղեկանքներ: Այդ տեղեկանքները նշված անձինք ներկայացրել են ճանապարհային ոստիկանության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և դրանց հիման վրա Հայաստանում իրենց անվամբ հաշվառել են ավտոմեքենաներ, մինչդեռ նշված անձինք վերոհիշյալ հասցեների բնակարաններում երբևէ չեն բնակվել: Լոռու մարզի ոստիկանները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ՝ նշված անձանց գտնվելու վայրը պարզելու, նրանց հայտնաբերելու ուղղությամբ:

# Թումանյանի բաժնի ոստիկանները ապօրինի ծառահատման դեպք են բացահայտել

Փետրվարի 19-ին ոստիկանության Թումանյանի բաժնում ստացված տվյալներն իրացնելիս ոստիկանները Թումանյան համայնքում հայտնաբերել և ապօրինի ծառահատման կասկածանքով բաժին բերման են ենթարկել երկու քաղաքացու՝ «ԿամԱԶ» մեքենայով հանդերձ: Մեքենան բեռնված է եղել մոտ 4 խմ փայտանյութով: Բերման ենթարկվածներից մեկը հայտարարել է, որ ընկուզենու փայտանյութը իրենն է: Փետրվարի 16-ին բենզասղոցով հատել է Քոբայր բնակավայրի իր սեփական տարածքից և ցանկանում է տեղափոխել տուն: Նշանակվել է մասնագիտական ստուգում: Հանգամանքները պարզվում են: Նախապատրաստվում են նյութեր:

# «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱՄՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ (4 ԴԱՍԱԺԱՄ) ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանգ կացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մարտի 30-ին՝ ժամը 15-ին, Ձորամուտի միջնակարգ դպրոցում: Հեռ.՝ (093) 81-64-12:

*ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*